Պարույր Սևակ

Ներշնչման պահերին

Այս պահերին աշխարհում
Ես հարուստ եմ բոլորի՜ց:
Ես բարի եմ մանկան պես
Այս պահերին աշխարհում:
Այս պահերին թվում է՝
Փակ դուռ չկա ինձ համար -
Ուր էլ գնամ՝ կընդունեն,
Եվ չեն մերժի՝ ինչ ուզեմ:
Այս պահերին թվում է,
Որ հողագունդը համայն
Ես կարող եմ մի խոսքով
Լաց լինելու չափ հուզել.
Ես կարող եմ մի խոսքով
Թախծոտ մորը սփոփել,
Իմ մի խոսքով կարող է
Սիրտը սիրով տրոփել.
Իմ մի խոսքով կարող է
Գնալ զինվորը մարտի,
Իմ մի խոսքը կարող է
Մարդ դարձընել տմարդին:
Ես կարող եմ ձեռք բերել

Իմ մի հատիկ մի խոսքով,
Ինձ չեն կարող ձեռք բերել
Ո՛չ արյունով, ո՛չ ոսկով,
Ո՛չ հրդեհով, որ տներ
Ու քաղաքներ է վառում...
Ես զորեղ եմ ամենքից
Այս պահերին աշխարհում...